ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

« ՇՄՆԷՊԾ-ԳՀԽԱՇՁԲ-25/3» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան **« 05» « դեկտեմբերի» 2025թ.**

ժամը 15:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ Ա. Մեսրոպյան

Գնահատող հանձնաժողովի անդամներ՝ Ա. Իվանյան

Ռ. Փաշիկյան

Մ. Վարդանյան

Է. Ղուկասյան

Հնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Ղազարյան

1. Տեղեկություն «ՇՄՆԷՊԾ-ԳՀԽԱՇՁԲ-25/3» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման առարկայի նախահաշվային գնի մասին

(Ա. Մեսրոպյան)

1.1.

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	նախահաշվային գինը /ՀՀ դրամ/
1	ՀՀ Մարզ Տավուշ, ք. Դիլիջան, Թբիլիսյան խճուղի 2 227.7 քմ այցելուների տեղեկատվական կենտրոն ընթացիկ նորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական աշխատանքներ	1 700 000

2. Տեղեկություն «ՇՄՆԷՊԾ-ԳՀԽԱՇՁԲ-25/3» ծածկագրով գնանշման հարցման ձևով հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

(Ա. Մեսրոպյան)

2.1. «ՇՄՆԷՊԾ-ԳՀԽԱՇՁԲ-25/3» ծածկագրով գնանշման հարցման հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2025 թվականի դեկտեմբերի 5-ին, ժամը 15:00-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները

Մասնակցի անվանումը	Էլեկտրոնային փոստի հասցե	ՀՎՀՀ	Հեռախոսահամար
«ԱՐՏ.ԱԼԵՔՍ» ՍՊԸ	art.aleqs@list.am	01007651	374 91 57 24 12
«ԱՄԷԼԻ» ՍՊԸ	ameli-88888@mail.ru	00249916	374 99 917 274

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Ա. Մեսրոպյան)

ՀՀ դրամ

N	Կազմակերպության անվանումը	Չափաբաժնի համարը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ /ՀՀ դրամ/	Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/
1	«ԱՐՏ.ԱԼԵՔՍ» ՍՊԸ	1	1 100 000		1 100 000
2	«ԱՄԷԼԻ» ՍՊԸ	1	1 275 000		1 275 000

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում թվաբանական անճշտություններ չկան:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ հրավերի պահանջներին համապատասխան հայտերի էլեկտրոնային ձևով կազմման և ներկայացման վերաբերյալ

(Ա. Մեսրոպյան)

5.1 Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթները կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. Բացված յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում առկա հրավերով պահանջվող փաստաթղթերի և դրանց՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

(Ա. Մեսրոպյան)

6.1 Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով մասնակիցների կողմից ներկայացված հայտերը՝ արձանագրել է հետևյալը.

-**«ԱՄԷԼԻ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված նախկինում կատարված N-25/14 պայմանագրի հանձնման-ընդունման արձանագրության մեջ նշված է.ծառայության մատուցում ըստ պայմանագրի՝ 18.08.2025-**18.01.2025**, իսկ ծառայության փաստացի կատարում՝ 18.08.2025-13.10.2025, հաշվի առնելով առկա անհամապատասխանությունը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված փաստաթուղթը չքննարկել՝ հաշվի առնելով, որ այն չի կարող գնահատվել,

-**«ԱՐՏ. ԱԼԵՔՍ»** ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

6.2 Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով և ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» /այսուհետ՝ Կարգ/ 41-րդ կետի պահանջները՝ որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և ծանուցել **«ԱՄԷԼԻ» ՍՊԸ-ին** մեկ աշխատանքային օրվա ընթացքում (ծանուցումը ստանալու օրվանից հաշված) շտկել 6.1 կետով արձանագրած անհամապատասխանությունը: Մասնակցի կողմից անհամապատասխանությունը շտկելու դեպքում հայտը կգնահատվան բավարար, հակառակ դեպքում հայտը կգնահատվի անբավարար և կմերժվեն համաձայն կարգի 42-րդ կետի: **Անհամապատասխանության չշտկումը կդիտվի գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում:**
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

7. Ընդհանուր տեղեկություններ գնման ընթացակարգի վերաբերյալ

(Ա. Մեսրոպյան)

7.1 Գնահատող հանձնաժողովի անդամները և քարտուղարը «ՇՄՆԷՊԾ-ԳՀԽԱՇՁԲ-25/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո ստորագրել են հայտարարություն, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունեն շահերի բախում:

7.2 «ՇՄՆԷՊԾ-ԳՀԽԱՇՁԲ-25/3» ծածկագրով մրցույթի հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

7.3 Մասնակիցները ընդգրկված չեն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

7.4 Մասնակիցը ընդգրկված չեն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցներին փոխկապակցված անձանց ցուցակում:

7.5 Մասնակիցը ընդգրկված չեն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներին փոխկապակցված անձանց ցուցակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

8. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Մեսրոպյան)

8.1 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը հրավիրել մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման հաջորդ աշխատանքային օրը, բայց ոչ ուշ քան դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Մեսրոպյան

Գնահատող հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Իվանյան

_____ Ռ. Փաշիկյան

_____ Մ.Վարդանյան

_____ Է. Ղուկասյան

Գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ս. Ղազարյան